# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հուլիսի 2016 թվականի No33

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 25-ի №9 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 7-ի N32 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N54 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հուլիսի 2016 թվականի No34

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N32 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3)-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի հուլիսի 20-ի N01/15.1/2872-16 գրությունը համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի համայնքային սեփականություն համարվող գույքն աճուրդային կարգով օտարելու մասին» N32 որոշման աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՋՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N34 ՈՐՈՇՄԱՆ

Կ. Տ.

| Լոտ | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /դրամ/ | Անվանումը | Գտնվելու վայրը | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 07-029-0143-0009 | 2.42578 | գյուղատնտեսական | արոտավայր | 163740 | հողամաս | գ. Ջովունի | չկան |
| 2 | 07-029-0143-0094<br>07-029-0143-0095<br>ընդամենը | 0.72<br>0.11671<br>0.83671 | գյուղատնտեսական<br>գյուղատնտեսական<br>գյուղատնտեսական | արոտավայր<br>արոտավայր<br>արոտավայր | 48600<br>7880<br>56480 | հողամաս<br>հողամաս<br>հողամաս | գ. Ջովունի<br>գ. Ջովունի<br>գ. Ջովունի | չկան<br>չկան<br>չկան |
| 3 | 07-029-0185-0041 | 0.84688 | գյուղատնտեսական | այլ | 57170 | հողամաս | գ. Ջովունի | չկան |
| 4 | 07-029-0185-0065 | 1.25659 | գյուղատնտեսական | վարելահող | 458660 | հողամաս | գ. Ջովունի | չկան |
| 5 | 07-029-0043-0089 | 0.00803 | բնակավայրերի | հասարակական | 363280 | հողամաս | գ. Ջովունի<br>1 փողոց 196 | չկան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հուլիսի 2016 թվականի No35

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N54 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի պահանջներով համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, «Մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի 2016 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N54 որոշման հավելված 1-ում 9 տողի պաշտոնային դրույքաչափեր սյունյակի «180000» թիվը փոխարինել «90000» թվով համաձայն հավելված 1-ի:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՋՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N35 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Ջովունիի համայնքապետարանի աշխատակազմի
Աշխատակիցների թվաքանակը՝ 21

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 356000 | | | 356000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | | 1 | 173500 | | | 173500 |
| 3 | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | | 1 | 113500 | | | 113500 |
| 4 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | | 1 | 113500 | | | 113500 |
| 5 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 183500 | | | 183500 |
| 6 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 177000 | | | 177000 |
| 7 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2, 3.1-3 | 2 | 125000 | | | 250000 |
| 8 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-2, 3.2-1 | 2 | 123500 | | | 247000 |
| 9 | | Հարկահավաք | Տեխնիկական սպասարկման | | 2 | 90000 | | | 180000 |
| 10 | | Համակարգչային-օպերատոր | Տեխնիկական սպասարկման | | 1 | 112500 | | | 112500 |
| 11 | | Տրակտորիստ-մեխանիզատոր | Տեխնիկական սպասարկման | | 1 | 98000 | | | 98000 |
| 12 | | Տրակտորիստ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 98000 | | | 98000 |
| 13 | | Բանվոր | Տեխնիկական սպասարկման | | 2 | 101200 | | | 202400 |
| 14 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 87000 | | | 87000 |
| 15 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 83000 | | | 83000 |
| 16 | | Գերեզմանատան պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 83000 | | | 83000 |
| 17 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 101200 | | | 101200 |
| | Ընդամենը | | | | 21 | | | | 2659100 |